# ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
# НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

## ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 20 ՏԱՐԻՆ

Հայ արևելագիտական միտքն ունի հարուստ պատմություն։ Սակայն մինչև վերջերս գիտության այդ բնագավառով զբաղվել են միայն առանձին անհատներ, սկսած մեր պատմագիրներից մինչև XIX դարի և XX դարի առաջին տասնամյակների հայ արևելագետ-պատմաբանները կամ գիտական և ուսումնական հիմնարկները, որոնք մեր ժողովրդի պատմության հարցերը մշակելիս զբաղվել են նաև հարևան երկրների պատմամշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքի հարցերով։ Հատուկ արևելագիտական հետազոտական հաստատություն ստեղծվել է միայն 1958 թ., երբ կազմակերպվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորը, որը 13 տարի հետո բազա հանդիսացավ համապատասխան ինստիտուտի համար։

Ահա այդ նշանավոր տարեթվին էր նվիրված ինստիտուտի գիտխորհրդի ընդլայնված նիստը, որը տեղի ունեցավ անցյալ տարվա դեկտեմբերի 28-ին։ Նիստը ներածական խոսքով բացեց ինստիտուտի դիրեկտոր, ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյանը։ Նա նշեց, որ ինստիտուտի կազմակերպմանը նպաստեցին սեկտորում կատարված աշխատանքները, մասնագետ կադրերի առկայությունը, ինչպես նաև հայերի արևելյան ժողովուրդ լինելու և հարևանների հետ լայն կապեր ունենալու հանգամանքները, կապեր, որոնց պատմությունն իր պատշաճ տեղն է գտել հայկական աղբյուրներում, գրականության մեջ և մամուլում։

Անցած 20 տարիների գիտահետազոտական գործունեության արդյունքների և ինստիտուտի առջև դրված խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի դիրեկտորի գիտական գծով տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Ինճիկյանը։ Նա նշեց, որ հայ արևելագիտական մտքի պատմության մեջ նշանավոր տարեթիվ է 1958 թ. հոկտեմբերի 16-ը, երբ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի հիմնադիրը և առաջին վարիչը, այն ժամանակ ակադեմիայի վիցեպրեզիդենտ Մ. Գ. Ներսիսյանը ստորագրեց իր № 1 հրամանը, որով մի խումբ գիտական աշխատողներ դարձան սեկտորի առաջին աշխատակիցներ։ Կոմունիստական կուսակցության XX համագումարի ցուցումների համաձայն 1950-ական թթ. մեր երկրում ստեղծվեցին վեց արևելագիտական հիմնարկներ, որոնցից մեկը մեր սեկտորն էր։ Բնական և հասկանալի է, որ նման հիմնարկի առջև դրվեց գլխավորապես ժամանակակից պրոբլեմներով զբաղվելու խնդիրը, որը և իրագործվում էր սեկտորում։ Ուսումնասիրության առարկա հանդիսացան, առաջին հերթին, մեր հարևան երկրների ու ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կյանքը, նրանց պատմությունն ու մշակույթը։ Սեկտորի ներսում համապատասխանաբար ստեղծվեցին թուրքագիտության, պարսկագիտության և արաբական երկրների խմբեր, որոնք համալրվեցին հանրապետության տարբեր հիմնարկներից եկած մասնագետներով, իսկ մի տարի հետո նույն ձևով կազմակերպվեց նաև քրդագիտական խումբը։

Ահա այսպիսի կազմով, գիտական աշխատակիցների քանակական և որակական աճի շնորհիվ հետզհետե ամրապնդվելով սեկտորը, Հ. Գ. Ինճիկյանի ղեկավարությամբ, գոյություն ունեցավ մոտ 13 տարի և նախապատրաստեց համապատասխան պայմաններ ապագա ինստիտուտի համար։ Դեռևս 1968 թ., երբ նշվում էր սեկտորի գոյության տասնամյակը, լրիվ պրոֆիլով արևելագիտության ինստիտուտ ստեղծելու պահանջն արդեն դարձել էր պրակտիկ և կենսական հարց։ 1971 թ. մայիսին համապատասխան ինստանցիաներում քննարկվելուց հետո միութենական կառավարական օրգանները կայացրին ցանկալի որոշումը։ Այնուհետև հանրապետության Մինիստրների խորհուրդը՝ հունիսի 24-ին և գիտությունների ակադեմիայի նախագահությունը՝ հուլիսի 28-ին որոշեցին սեկտորի բազայի վրա կազմակերպել արևելագիտության ինստիտուտը, որի դիրեկտոր 1971 թ. նոյեմբերին նշանակվեց Գ. Խ. Սարգսյանը։ Սեկտորում գոյություն ունեցող խմբերը դարձան բաժիններ և ներկայումս Թուրքիայի, Իրանի, արաբական երկրների, քրդագիտության բաժինների կողքին գործում են Հին Արևելքի բաժինը, որը կազմակերպվեց ինստիտուտի գոյության սկզբին և կովկասագիտության ու բյուզանդագիտության բաժինը, որը հիմնադրվեց 1975 թ.։

Ինստիտուտում ձևավորվում է նաև աղբյուրագիտական պրոբլեմային խումբ, որտեղ կենտրոնացվել են եղած բոլոր մասնագետները և անհրաժեշտ նախապատրաստական շրջանից հետո խումբը հիմք կհանդիսանա ապագա 7-րդ բաժնի։ Այլ ինստիտուտների օրինակով նախատեսվում է ապագայում վերակառուցել այն ըստ գիտական ուղղությունների և ունենալ ուսումնասիրվող երկրների ու ժողովուրդների պատմության, լեզվի ու գրականության, սոցիալ-տնտեսական պրոբլեմների, միջազգային հարցերի և այլ բաժիններ։ Նման վերակառուցումը, անշուշտ, բաժիններում ստեղծագործական մթնոլորտը կդարձնի ավելի բարենպաստ, կօգնի լուրջ մասնագիտական քննարկումների կազմակերպմանը և ուսումնասիրությունների որակի ու գիտական մակարդակի բարձրացմանը։

Հիշյալ տեղաշարժերը կապված են կադրերի հետագա աճի և տեղաբաշխման չափազանց կարևոր խնդրի հետ։ Այդ խնդիրը մշտապես գտնվել է ակադեմիայի և սեկտորի ու ինստիտուտի ղեկավարության ուշադրության կենտրոնում։ Նման վերաբերմունքի արդյունքը եղել է հետևյալը. եթե սեկտորի հիմնադրման առաջին տարում աշխատակիցների թիվը 22-ն էր, որից միայն 17-ը գիտական աշխատակիցներ էին և դրանցից մեկը՝ գիտությունների դոկտոր, ութը՝ թեկնածուներ, ապա 1968 թ. 51 մարդուց 44-ը գիտական աշխատողներ էին, որոնցից 2 դոկտոր և 23 թեկնածուներ։ Ինստիտուտը կազմակերպվելուց անմիջապես հետո նրա աշխատակիցների թիվը հասավ 63-ի, որոնցից 59-ը գիտական աշխատող՝ 7-ը գիտության դոկտորներ և 27-ը թեկնածուներ։ Իսկ հաստատության 20-ամյակը նշելիս նրանում աշխատում էր 82 մարդ, որից 64-ը գիտական և 12-ը գիտաօժանդակ աշխատողներ (9 գիտության դոկտորներ և 25 թեկնածուներ)։

Կադրերի պատրաստման գործում տեղում ասպիրանտական ուսումնառության սիստեմի կողքին վերջին տարիներին զգալի դեր են կատարում նպատակային ասպիրանտուրան և գիտության խոշոր կենտրոններում ստաժորների պատրաստման կարգը։ Ընթացիկ տարվա տվյալների համաձայն այդ բոլոր ձևերում ինստիտուտը պատրաստում է 17 երիտասարդ մասնագետներ։ Արևելագիտության զարգացման համար մեծ նշանակություն ունի տեխնիկական և գիտական բազայի ընդլայնումը՝ անհրաժեշտ սարքավորումների և գրականության ձեռքբերումը։ Չափազանց կարևոր էր ինստիտուտի տեղափոխումը նոր շենք 1972 թ.։ Ավելի հարմար պայմաններ ստեղծվեցին բաժինների նորմալ աշխատանքի համար, համեմատաբար ընդլայնվեցին գրադարանի զբաղեցրած տարածությունները, կարգի բերվեցին նրա ֆոնդերը, գրապահոցը դարձավ լիարժեք գրադարան իր մինիմալ հարմարություններով, քարտարանով և ֆոնդերի համապատասխան դասավորմամբ։ Այժմ հանրապետությունում այն միակ արևելագիտական գրադարանն է։ Մոտ ապագայում նա կունենա շուրջ 30 հազար գրադարանային միավոր, որի ավելի քան 50 տոկոսը կազմում են արևելյան ու եվրոպական լեզուներով գրականությունը և մամուլը։

Անցած 7 տարիներին ինստիտուտում ծավալված գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունք է հանդիսանում լրիվ պրոֆիլով արևելագիտական գիտահետազոտական հիմնարկի ձևավորումը, որի ուսումնասիրության առարկան են հանդիսանում Մերձավոր և Միջին Արևելքի ու Կովկասի ժողովուրդների պատմության, տնտեսության, մշակույթի և նրանց փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների պրոբլեմները՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Անցած երկու տասնամյակներում ինստիտուտի գիտական կոլեկտիվը մշակել է և շարունակում է ուսումնասիրել հիշյալ ռեգիոնի մի շարք կարևոր թեմաներ և հարցեր։

Ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները եղել են՝ ազգային-ազատագրական, դեմոկրատական և բանվորական շարժումները, զարգացող երկրների տնտեսական, սոցիալական ու քաղաքական խնդիրները, ասիական երկրների միջազգային հարաբերությունները, Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների կուլտուրան, Հին Արևելքի պատմությունն ու բանասիրությունը, կովկասյան որոշ ժողովուրդների պատմությունը և բանասիրությունը։

Ինստիտուտի գիտական կոլեկտիվի կողմից մշակված հարցերից են՝ Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Հին Արևելքի երկրներում սոցիալ-տնտեսական ստրուկտուրաների զարգացումը, Օսմանյան կայսրությունում, Իրանում և Քուրդստանում ֆեոդալական հարաբերությունների քայքայումը, կապիտալիստական, բուրժուական կարգերի ձևավորումն ու զարգացումը և այդ զարգացման յուրահատկությունները տարբեր երկրներում։ Հին Արևելքի սոցիալ-տնտեսական հարաբերությունները լուսաբանող գործերի թվին են պատկանում՝ «Ուրարտուի տեղագրական քարտեզը» մանրամասն բացատրություններով, որի օրգանական շարունակությունը կլինի դեռևս մշակվող «Ուրարտուի երկրագործական քարտեզը», ապա նաև «Վերին Եփրատի մարզերը մ. թ. ա. XII—IX դարերում», «Էգիբի գործարար տունը Բաբելոնում մ. թ. ա. VI դարում», «Տելեպինուի օրենսդրու-

թյունը որպես խեթական թագավորության պատմության աղբյուր»։

Գերմանական Դեմոկրատական Հանրապետության գիտությունների ակադեմիայի հին պատմության և հնագիտության կենտրոնական ինստիտուտի համագործակցությամբ ավարտվել է «Հելլենիստական Միջագետքի սոցիալ-տնտեսական պատմության սեպագիր փաստաթղթերի ժողովածուն», որը կարևոր ներդրում է հիշյալ պրոբլեմի ուսումնասիրության և հին աշխարհի բանասիրության ասպարեզում։

Զգալի աշխատանք է կատարված Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը XIX—XX դդ. պրոբլեմի գծով։ Գրեթե ավարտվել է արաբական ժողովուրդների հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական պայքարը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը թեման և այդ խնդրի վերաբերյալ հրատարակվել են մենագրություններ Իրաքի, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների պայքարի մասին։ Այդ թեմայի ուսումնասիրության սկզբունքային ելակետ է հանդիսացել Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների վրա ցույց տալու խնդիրը, որը իրագործվել է մի քանի հրատարակությունների միջոցով և շարունակում է մնալ ինստիտուտի գիտահետազոտական պլաններում։ Հիշյալ ընդհանուր պրոբլեմի մի մասն է կազմում մասամբ մշակված ազգային հարցը և ազգային փոքրամասնությունների վիճակը ուսումնասիրության առարկա հանդիսացող երկրներում։

Ժամանակակից ակտուալ գիտական ու քաղաքական խնդիրներից մեկն է տվյալ ռեգիոնի երկրների ներքին ու արտաքին քաղաքականության կարևոր կողմերի լուսաբանումը։ Այս բնագավառում ձեռք բերված հաջողությունները հիմք են հանդիսացել համագործակցելու ՍՍՀՄ արևելագիտության ինստիտուտի և նրա լենինգրադյան բաժանմունքի հետ։ Այդ համագործակցության արդյունք են հանդիսանում «Թուրքիայի նորագույն պատմությունը» և «Թուրքիայի քաղաքական կուսակցությունները» աշխատությունները։ Մշակվել և մասամբ հրատարակվել են Թուրքիայի և Իրանի ներքին քաղաքականության առանձին հարցերը, կրոնի դերը այդ քաղաքականության վրա, ժամանակակից սոցիալ-տնտեսական տեղաշարժերը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, տնտեսական ինքնուրույնություն ձեռք բերելու համար ծավալված պայքարի փորձերը առանձին երկրներում և մի շարք մասնակի այլ հարցեր։

Միջազգային հարաբերությունների գծով մշակվել են՝ արաբական պետությունների միջազգային քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, նույն ժամանակաշրջանի Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, թուրք-իրանական, թուրք-հունական, թուրք-ֆրանսիական, թուրք-բալկանյան և սովետա-թուրքական հարաբերությունների տարբեր փուլերի պատմությունը, Օսմանյան Թուրքիայի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Իրանի միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին և այլն։ Հրատարակվել են առանձին աշխատություններ օտար կապիտալի ներխուժման և նրա ազդեցության մասին Թուրքիայի, Իրանի և արաբական որոշ երկրների տնտեսության վրա։

Ինստիտուտի պլաններում և հրատարակվող գրքերում հատուկ ուշադրություն է դարձվել հասարակական-քաղաքական հոսանքների, գաղափարական խնդիրների, ինչպես նաև պանիսլամիզմի, պանթուրանիզմի, օսմանիզմի և պանթուրքիզմի առաջացման, դրանց դրսևորման և առանձին արտահայտությունների մեկնաբանման վրա։

Ինստիտուտը զբաղվում է նաև Արևելքի երկրների հայ գաղութների պատմության հարցերով։

Մշտական ու կարևոր պրոբլեմ են հանդիսացել աղբյուրագիտական աշխատանքները։ Դրանք ունեցել են երկու ուղղություն. առաջինը՝ օտար աղբյուրները հայերի, Հայաստանի և հարևան ժողովուրդների մասին և երկրորդը՝ հայկական աղբյուրները Արևելքի երկրների ու ժողովուրդների մասին։ Առաջին ուղղությանը պատկանող հրատարակություններից և կատարված աշխատանքներից նշենք թուրքական աղբյուրների հիմնական նյութերն ընդգրկող 4 հատորները, արաբական աղբյուրները հայերի մասին մեկ հատորյակը, օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, ազգային փոքրամասնությունների վիճակը ըստ օսմանյան օրենսդրական ակտերի, XIX դարի վերջի և XX դարի սկզբի թուրքական պետական, քաղաքական և մշակութային գործիչները արևմտահայության վիճակի մասին թեմաներով ուսումնասիրությունները։ Երկրորդ ուղղության գծով լույս են տեսել առանձին աշխատություններ, որտեղ ներկայացված են հայկական աղբյուրները Իրանի, Հնդկաստանի և մասամբ Օսմանյան կայսրության մասին։ Աշխատանքներ են կատարվում վրացական աղբյուրների մշակման և հրատարակման գծով, ինչպես, օրինակ, «Հայաստանի վրացական արձանագրությունները» գիրքը, «Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները», որը հրատարակվում է։

Հարևան երկրների ու ժողովուրդների լեզվի,

գրականության և մշակույթի պատմության հարցերը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը իրենց պատշաճ տեղն ունեն ինստիտուտի գործունեության մեջ։ Դրանք արտահայտվում են այնպիսի թեմաների մեջ, ինչպես՝ ուրարտա-խուրիտական լեզվական ընդհանրությունները, որը կօգնի հետազոտելու մեր լեզվի մեջ դեռևս չմեկնաբանված բառապաշարը և բացահայտելու ուրարտա-հայկական և խուրիտա-հայկական պատմամշակութային որոշ կապեր։ Ավարտվել է խեթա-հայկական ընդհանրությունները թեման, շարունակվում են ուսումնասիրությունները խեթերեն լեզվի բառապաշարի և հնարևելյան լեզուների մի շարք խնդիրների վերաբերյալ։

Բրդագիտությունը կատարել է զգալի առաջընթաց, մշակելով կարևոր հարցեր ու պրոբլեմներ լեզվի, գրականության, ազգագրության և պատմության բնագավառներում։ Բոլոր վերոհիշյալ և զեկուցման մեջ չնշված, սակայն ոչ պակաս կարևոր ուսումնասիրությունները 20 տարում ամփոփվել են ավելի քան 80 մենագրություններում ու ժողովածուներում։ Դրանցից հինգը թարգմանվել և լույս են տեսել օտար լեզուներով, արտասահմանում։ Մեր հրատարակություններում կարևոր տեղ են գրավում մատենաշարով լույս տեսնող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (հրատարակվել են 10 գրքեր), «Հին Արևելք» (3 գիրք) և նոր հրատարակվող «Կովկասը և Բյուզանդիան» ժողովածուները։

Ունենալով անցյալ 20 տարիների փորձը, ինստիտուտի գիտական կոլեկտիվը ի վիճակի է առաջադրել և լուծել մի շարք կարևոր խնդիրներ և ստեղծել ու զարգացնել նոր ուղղություններ։ Անհրաժեշտ է ամենից առաջ ամրապնդել Թուրքիայի բաժինը, որպեսզի նա իր մյուս աշխատանքներին զուգահեռ կարողանա ղեկավարել «Հայաստանը և հայերը Օսմանյան կայսրության մեջ» խոշոր պրոբլեմի մշակումը։ Որպեսզի հետ չմնանք ժամանակակից արևելագիտության զարգացման մակարդակից, մեզ անհրաժեշտ է պատրաստել տնտեսագետների, սոցիոլոգների, կուլտուրայի պատմության մասնագետների, ինչպես նաև Հին Արևելքի և միջնադարի առանձին պրոբլեմների գծով նոր, երիտասարդ կադրեր։

Գիտխորհրդի ընդլայնված նիստում շնորհավորական ելույթներ ունեցան ու ապագա անելիքների մասին իրենց կարծիքները հայտնեցին ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Լ. Ս. Խաչիկյանը, պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, պրոֆ. Վ. Բ. Բարխուդարյանը, Գ. Տիրացյանը և Պ. Մուրադյանը։ Գիտական խորհրդի նիստն ամփոփեց ինստիտուտի դիրեկտոր Գ. Խ. Սարգսյանը։

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ԽՆԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայտնի է, որ Աբովյանը Դորպատում սովորելու ժամանակ (1830—1835) ստացել էր լուրջ աշխարհագրական գիտելիքներ, Ֆ. Պարրոտի ղեկավարությամբ կառուցել հայագիր ուսումնական գլոբուս և ճանապարհորդել Մերձբալթիկայում, իսկ հետագա տարիների ընթացքում (1838—1847) մասնակցել դեպի Հայաստան կազմակերպված բոլոր գիտական արշավախմբերին։ Հատկանշական է, որ ուղևորություններից հետո նա գրել է արժեքավոր աշխատություններ, մի մասը հրատարակել և դրանց շնորհիվ դեռ իր կենդանության օրոք հայտնի եղել «իրրև հայրենիքը լավ ճանաչող և դեպի գիտությունները սեր ունեցող»[1] ուսուցիչ։ Բացի այդ, որպես աշխարհագրություն դասավանդող նա անհրաժեշտ ուշադրություն է դարձրել քարտեզների օգտագործման վրա, տարեցտարի հարստացրել Թիֆլիսի, այնուհետև Երևանի գավառական ուսումնարանների գրադարանները նոր հրապարակված պատի քարտեզներով ու ատլասներով[2]։ Հասկանալի է, որ աշխարհագրության այսպիսի ուսուցիչը, որի ամենօրյա կյանքում ու աշխատանքային գործունեության մեջ աշխարհագրական ինֆորմացիաներն այդքան խոշոր դեր են խաղացել, չէր կարող գծագրած չլինել սեփական քարտեզներ։ Բարեբախտաբար պահպանվել են դորպատյան շրջանում նրա գծագրած երեք քարտեզները՝ Արևմտյան կիսագնդի, Արևելյան Հայաստանի և Հյուսիսային բարեխառն գոտու։

Արևմտյան կիսագնդի քարտեզը (նկ. 1) գտնվում է Աբովյանի արխիվի չհրապարակված

1 Տե՛ս Անդրկովկասյան ուսումնարանների վերատեսչության 1844 թ. մարտի 18-ի № 401 լրությունը ուղղված Խ. Աբովյանին, անվանի երկրաբան Հ. Աբիխի ուսումնասիրություններին մասնակցելու մասին (Հայկ. ՍՍՀ պետական, կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 780, թ. 1—2)։

2 Տե՛ս, օրինակ, Երևանի գավառական ուսումնարանի գրադարանի 1849 թ. գրքերի ցուցակը (նույն տեղում, գ. 1733, թ. 16—20)։